Թ. ՏԱՐԻ 2898 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 22 ՀՈԳԻ 4386 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1893 3 ՐԻՊԻԼ, ՀԻՃՐԻ 1311 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐՇԱԿԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌وك غزته‌سى ادارەسنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐՇԱԿԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դրամական արժէք 150
» » Վեցամեայ » » 75
» » Եռամսեայ » » 40
Օտար երկիրներ Տարեկան Ֆրանկ 56
» » Վեցամեայ » 28
Ընտիր թուղթի վրայ տարեգրում Տարեկան Օսմ. Ոսկի 2
Գաւառաց թղթատարն տարեկան Ֆրանկ Դրուշ 50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 1/13 ՀՈԿՏ. 1893

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ.— Այսօր, 1/13 Հոկտ., Ավէլեան ծովակալի նաւախումբն, երեք մարտանաւէ բաղկացեալ և Խաղաղական Ովկիանոս գնացող երկու մարտանաւեր, ընդ ամենայն հենգ ռուսական զրահաւորք, կ'այցելեն Թուլոն, փոխարինելով Քրոնշդատի այցելութիւնը։ Ֆրանսացւոց համար այսօր, և մինչև երկու շաբաթ, օրուան մեծ դէպքը պիտի ըլլայ սոյն այցելութիւն, քաղաքական պատճառներով որք բազմից բացատրուած են արդէն։ Ֆրանսական գլխաւոր շաբաթաթերթը, Ռէվը- Պլէ, իւր վերջին թուով հրատարակած է երկու յօդուածներ տարբեր ոգւով սոյն ռուսական այցելութեան առթիւ։ Առաջին յօդուածին մէջ կ'ըսէ։

«Կ'ուզէ՞ք դիանալ թէ Ֆրանսա Ռուսիոյ ո՞րչափ փոխ տուած է ցարդ։— Իբր երեք ու կէս միլիառ։ Իրաւ է որ այս դրամ գրէթէ ամբողջովին գործածեցաւ հին պարաքեր վճարելու՝ ա. նոնց տոկոսը զեղչելու համար։ Ռուսիա պարզապէս իւր պահանջատէրները փոխեց, և Բրուսիոյի Շայլոքին ձեռքէն ազատեցաւ։ բայց այսուհետև ռուսական ամէն փոխառութիւն ի Ֆրանսա բան մը պիտի աւելցնէ Ռուսիոյ անտեսական զարգացման վրայ. պիտի աւելցնէ անոր զինուորական սպառազինութիւնն, և զօրագունդեր պատերազմական վիճակի մէջ դնելու նպատակ։ Ֆրանսական խնայութիւնք պիտի յարուցանեն անտեսական և զինուորական զօրութեանց համախմբում մը, որ արդէք պիտի ըլլայ Գերմանիոյ ևս առաւել հարստանալուն և զօրանալուն։ Եթէ Ֆրանսուհուս նիզակակցութիւնը պահպանուի ու զօրացուի, պատմութեան օրէնք մը ակներեւ պիտի ըլլայ։ Վաղ կամ անագան գերմանական տարրն անկարող պիտի ըլլայ դրամական և զինուորական արքի բեռը տանելու, և ուրիշներէ առնուած երկիրներն ետ տալ պէտք պիտի ըլլայ։ Ֆրանսայի միակ հաշիւն Ալզաս Լոռէնն է, բայց Վիւրզբուրգ գեւէն անդին Ռուսիա աւելի մեծ հաշիւներ ունի իւր գերման դրացւոյն հետ։ Գերմանիոյ համար դէպի Ռուսիա յառաջանալու ժամանակը վերջացած ըլլալով, սլաւ տարրը դէպ արեւմուտք (Գերմանիա) կրնայ յառաջ խաղալ օր մը։»

Հիմա մտիք ընէք Ֆրանսական միւնոյն թերթին երկրորդ յօդուածը։

«Մենք Ֆրանսացիքս երբեք կիսովին բան մը չենք ըներ։ Եւ երբ անգամ մը սկսինք սիրել անհատ մը կամ ազգ մը, անպատճառ խանդավառութեան կը տանինք։ Ֆրանսա հիմա բոլորովին Ռուսիոյ ձեռքը կը գտնուի, որ կուգայ երեք նաւով իւր սեփականութեան իրաւունքն ի գործ դնել։ Կը թուի թէ կառավարութիւնը գոհ պիտի ըլլար եթէ չափ մը դրուէր հանրային եռանդեան։ Պ. Ֆիւբիւի նախարարութիւնն այն Ֆնոզայ դիրքն ունի որք միշտ հոգ կը-նեն որ իրենց պզտիկ տղայք անխոհեմութիւն մը չընեն անյարմար տեղ մը։ Բայց լրագրութիւնը չափաւորութեան խօսք մտիկ ընել չուզեր։ Շնորհիւ լրագրութեան, Ռուսք մեր մէջ պիտի ընդունուին անօրինակ ցոյցերով։ Ազգայ իմաստութիւնը կ'ըսէ թէ մեր բարեկամները պէտք է սիրենք այնպէս իբր թէ անոնք օր մը պիտի դադրին մեր բարեկամներն ըլլալէ։ Քանի՞ կ'առնեա այս տեսակ խոհեմ դիտողութիւններ։ Մեզ համար ի՞նչ նշանակութիւն կրնան ունենալ անոնք։»

ՅՈՒՅՍԵՐՆ Ի ՖՐԱՆՍԱ.— Ի Փարիզ կէս պաշտօնապէս ծանոյց Հավասի Դորձակալութիւնը թէ Ֆրանքեւռուս հանդիսից առթիւ հաւանական է որ օտարականներ խառնուին Ֆրանսացիներուն և Երրեակ Նիզակակցութիւնը կողմոյ Տէրութեանց մասին անքաղաքագիտական խօսքեր ըսեն կամ ցոյցեր ընեն, դիւանագիտական հարցեր յարուցանելու համար Ֆրանսական կառավարութեան։ Հետեւապէս, լրագրութիւնն ամէն կողմ յորդոր կը կարդայ Ֆրանսական հասարակութեան որպէս զի այնպիսի օտարականներու շահագիտական ցոյցերուն չմասնակցի, և դրացի կառավարութեանց գիւրազգածութիւնը վիրաւորող բան մը չընէ Ռուսաց ի Թուլոն, Փարիզ, Լիոն և Մարսիլիա այցելութեան առթիւ։ Ֆրանսացիք շահ ունին այն գաղափարն հաստատելու թէ խելք ժողովուրդ են, եւ վայրապար չեն գրգռեր օտարներն, որքան ալ սիրտով ազէկ չըլլան անոնց հետ։ Այս անգամ եւս հոգ պէտք է տանին ծուռ գաղափար մը չտալու։ Այս մնոք արուած յորդորներու առատութենէն կ'երեւի թէ վարիչներն իրենք ևս այն մասին բոլորովին ապահով չեն դեռ։

ԱՎԷԼԱՆ բարեբախտ ծովակալն իւր ի Ֆրանսա այցելութենէն ալ և ալ կարգի յիշատակներ պիտի տանի։ Նախ իրեն պիտի տրուի՝ Փարիզի կողմէ՝ Ձոյլ արծաթէ արձան մը՝ «Զինեալ Թագաւորութիւնը» ներկայացնող, յետոյ արծաթեայ Մի մոռնար-զիս (Փէնսէ, ֆորբէ գուլաղը) ծաղիկներէ և երկնագոյն գոհարներէ կազմեալ փունջ մը, զոր մատուցանելու գաղափարը կը պատկանի Տիկին Ասանի։ Պոռտօ քաղաքն 5,000 ֆր. քուէարկեց՝ նոյն գաւառին ամենէն հմաբաւոր գինիներէն մէկ մէկ նմոյշ իրեն նուիրելու համար։ Ասով ծովակալին համար գինիի մթերանոց մը պիտի կազմուի, որ անչուշտ աւելի պիտի ճոխանայ եթէ Ռէնս և Տիժոն հետեւին Պոռտոյի օրինակին, և Պուրկոնեի ու Շամբանեի անուանի գինիներէն քանի մը տակառ նուիրեն, այն եռանդնաբորբոք գինիներէն որոնք մէկ կը բերի գաղղիական զուարթութիւնը։

ԲԱՆԱՄԱՑԻ գատապարտեալք մի առ մի բանտէն կ'ելնեն, պատժոյ մէկ մասին շնորհմամբ՝ ինչ ինչ պայմաններու տակ։ Պ. Շարլ տը Լէսէքսէ ետքն եւս Քրէսի Լիոնէի բարձրագոյն պաշտօնատար Պ. Պլանտէն, որ կաշառք տալու մեղնորդ եղած էր, և որ բանտարկուելէն ի վեր հիւանդ էր և Սէն Լուսի հիւանդանոցին մէջ կը դարմանուէր։ Միակ յանցաւորն որ բանտարկուած կը մնայ՝ Պայհոն է, կաշառակեր նախկին նախարարապետն, որ էգանքի բանտին մէջ համակերպութեամբ կը կրէ իւր արդար պատիժ։

ՌՈՒՄԱՆՈՒԻ օրիորդ մը կալացցի, որ ի Փարիզ Մարբէ-Քէօռի մայրապետներուն խնամքով կրթուած է անոնց գիշերօթիկ վարժարանին մէջ, ուսմանց ընթացքն աւարտելով, գրեց ուղղակէս առ Պ. Զոլա և հարցուց թէ «ձեր վէպերը կարդալու կ'արտօնե՞ք զիս։»— Պ. Զոլա պատասխանեց.—«Օրիորդ, ցորչափ աղջիկ մը չէ ամուսնացած, իւր ծնողաց խնամքին տակ կը գտնուի։ Երբ կարդուի, իւր ամուսնոյն խորհուրդ կը հարցունէ, և պէտք է հարցունէ։ Իմ կարծիքս է որ իմ գիրքերս կրնաք կարդալ, պայմանաւ որ ձեր ծնողք կամ ձեր երիցին առ այդ արտօնեն զձեզ։ ԷՄԻԼ ԶՈԼԱ»

ՍՈՒԼԹԱՆ ՏՈՒՆ.

Պուլկար տաղ Մէրսինի և Կեսարիոյ մէջ տեղ կը գտնուի, իբր 30 ժամ հեռի Միջերկրականի այն նաւահանգստէն։ Ընդարձակ հանք մ'ունի կապարախառն արծաթի։ Այս հանքին մէկ մասնաւոր յատկութիւնն է որ արծաթին հետ ոսկի եւս խառն կը գտնուի, թէեւ գոյն համեմատութեամբ։ և այնու հանդերձ միայն ոսկին տարեկան 1,000 ոսկիէն կրնայ արժել։ Միայն թէ հանքին շահագործումն հին ձեւով տեղի կ'ունենայ, և յուսացուածին չափ շահ չի տար Տէրութեան, որ սոյն բնական հարստութիւնը կ'արտադրէ ի ձեռն իւր հանքայ և անտառայ նախարարութեան։ Պուլկար տաղ անուան բաղարութիւնը գժուար է տալ։ Ոմանք կը կարծեն թէ այն կողմի լեռներ Տաւրոսեան լերինք կոչուած ըլլալով, ըստ սովորական Տաւրոս կամ Taurus Ցուլ կը նշանակէ, Պուլկար տաղ պէտք է ըլլայ Պուլղա տաղ։ Ցեղոյն բնակիչք մահմետականներ և թրքախօս յոյներ են, և կառավարիչը կը նստի Նէյսէ։ Պուլկար տաղ այն կողմի ամենէն բարձր տարն է։ Բնակիչք շատ տգէտ են։ Բժիշկի երես չեն տեսած։

Փոքր Ասիոյ գրէթէ ամէն կուսակցութեանց մէջ, ուշգիր ուշադիրը կը հանդիպի հին հանքերու օրք հազար կամ երկու հազար տարի առաջ շահագործուեր են։ Այո՛, միայն հին պատմական շէնքերու մնացորդներ չէ որ կը տեսնենք։ մետաղագործական ճարտարութեան նմոյշներ ալ կը նշմարենք, Տեղ տեղ փորուած են հանքեր, և առնոնց մնա փուռերու մէջ մետաղնիթք հալեցուած են և մրուրները դեռ կը կենան։ Մինչև իսկ այն ճարտարագէտք որք նոր հանքեր կը գտնեն կ'առաջնորդուին իրենց նախորդաց խուզարկութեամբ, որք մնաերն անշուշտ գտած են նոյն տեսակ հարստութիւն մը, և ականներ բացած են։ Ինչպէս գիտենք որ այս երկիրներ ու գաւառներ երբեմն քաղաքակրթութիւն վայելած են, հռոմէական, յունական, հեթանոսական կամ ուրիշ, նոյնքան ապահով կրնանք ըլլալ թէ հին քաղաքակրթութեան ի կիր արկած մետաղանիւթը սոյն այս գաւառներու մէջէն կը հանուէին։ Եւ հանքային վաղեմի ճարտարութեան հետքերուն շատութիւնն իսկ գաղափար կուտայ մեզ թէ երբեմն որքան հոգ տարուեր է այս հանրօգուտ ճիւղին։ Անոնք իրենց կրցածին չափ ըրած են։—չունենալով շատ խորունկ իջնելու գիւրութիւններ, մակերեսը քերած են առաւելապէս։ Հանքեր կան դրս բանեցնող նախնիք հարկադրուեր են կէս ճամբան թողուլ, կամ այն է որ տարերկրեայ ջուրերու ընթացքը չեն կրցեր դարձնել, և կամ պատճառն դէպքերու յանկարծակի երեւէիներ ուրիշներու ձեռք անցուցեր են շահագործութեան վայրերն։ Հանքային ճարտարագէտք կը պատմեն մանրամասն թէ ի Գարասու Աստաքաղի գիտած են հանք մը հին ձուլարանով, որ հանքանիւթոց մրուրներու հետ գտնուած են երբեմն ձուլուած արծաթախառն կապարի խոշոր կտորներ, ամեն մէկին աւելի քան 500 քիլոկրամ ծանրութեամբ։ Շատ մը կարեւոր հանքանիւթեր որք այսօր այնքան կը խնդրուին հնութեան մէջ ուշադրութիւն չէին գրաւեր, օրինակի համար գինկօ, քրոմ, մանկանէզ, նիքէլ, ոսկերոցակ պիսմութ, ալն։ Ինչպէս նաեւ ամեն տեսակ հանքածուխեր և հանքային կաղեր, նաւթ կամ քարիւղ, ձիւթ, ալն։

Մեր ժամանակներ հանքերուն այնքան ընդարձակապէս և շահաւորապէս շքանիլը կրնանք քանի մը օրոշ պատճառներու վերագրել։ Նախ և առաջ, սովորութիւն եղած էր որ յառաջագոյն հանքային կարգ մը շինութիւնք և մետաղանիւթոց փոխադրութիւնք իրրեւ սովորական աշխատութիւն չէին վարձաւորուեր, այլ իրրեւ տարք կը նրկատուէին, աշխատութեան տուրքը, տարապարհակի գրութեամբ կատարուելով, որուն ենթակայ էին գիւղացիք։ Ասկէ յառաջ եկաւ որ գիւղացիք հանքերը ծածկելու մէջ շահ տեսան։ զի ուր հանք չկար, հոն այս տեսակ աշխատութիւն չէր պահանջուեր գիւղացիներէն։

Եւ յետոյ, մասնագիտութեանց մէջ ամենէն գժուարներէն մէկն է հանքային մասնագիտութիւնն, որ չափական և բնական գիտութեանց մեծկակ պաշար և բաւական փորձառութիւն կը պահանջէ։ Ամեն եւրոպական Տէրութիւնք Հանքայ վարժարան իրենց ամենարարձր վարժարաններէն մին կը նկատեն։ Փարիզի մէջ Հանքայ Վարժարանի ընթացարար մը առաջին կարգի գիտնոի հարքաւ կը վայելէ իրաւամբ։ Բնական է որ մեր մէջ գեռ նոր սկսած ըլլայ հանքայ համար մասնագէտներու պարարտութիւնն, և մարդու պակասութիւն յապաղեցուցած ըլլայ մեր հանքայ ըստ ամենայնի շահագործումը։

Բայց ասոնք, հանքերն երկրին համար պահեստի մեծ հարստութիւն մ'են, և որպէս զի անարժան ձեռքերու մէջ չիյնան, շատ գժուարութեամբ արուած են խնդրուած արտօնութիւնք, և գիւրին չէ ամեն ուզողի արտօնութիւն տալ հանք բանալու և բանեցնելու։

Դերմապէս, մինչև քսան ժամանակներս, և մասամբ իւրք հիմակ ալ, փոխադրութեան միջոցներու սակաւութիւնն արգելք է մետաղանիւթերը շահաւորապէս տեղափոխելու։

Թէեւ իրաց այս վիճակ վերջին ժամանակներս բարեփոխուած, բայց դեռ ժամանակ պէտք է որ Դրամագլուխը վստահութիւն ստանայ՝ հանքային մեծ ձեռնարկներու մէջ դնելու համար։ Եւ յետոյ, պէտք է յիշենք թէ Եւրոպայ և Ամերիկայի մէջ հանքերը բանեցնելու համար բոժնի վրայ անանուն ընկերութիւնք կը կազմուին, և այս դրութիւն տակաւին մեր մէջ մնած և քաղաքացիութեան իրաւունք ստացած չէ այս կողմեր։ Զայս եւս ժամանակը պիտի բերէ անշուշտ։

Հետեւապէս, հանքային շահագործութիւնը մեր գաւառաց մէջ տակաւին կոյս վիճակ մը կը ներկայացնէ կրնանք ըսել. հակառակ անցեալ գործունէութեանց։ Կապան Մատենի արծաթի հարուստ հանքերը փակել պէտք եղած է՝ շահաւոր կերպիւ բանեցնելու գիւրութիւն չգտնուելուն համար հոն։ Կիւմիւշխանէի հանքն եւս եթէ չի բանիր, պատճառը նոյն է։ Արդի պայմաններուն մէջ ծախքը չի գոցուիր։ Բայց երբ պայմանք բարեփոխին, պատճառ չկայ որ երկիրը չօգտի։ Արդիսի պղինձի հրաշակաւոր հանքերն եւս նոյն վիճակին ենթարկուելու վրայ են։ Մատնագէտներ կ'ըսեն թէ այս հանքերէ հանուած պղինձն աւելի երկար կը պարունակէ քան պղինձ։ Կեդրոնէ հեռի, հաղորդակցութեան միջոցներէ աւելի կամ նուազ զուրկ, կարելի չէ եղած հաստատել ամենէն բարեկարգ դրութիւնն այս հանքայ շահագործման համար, և ապագային վերատեսել բարիքներու դասէն պէտք է համարիլք նաեւ այս հանքայ գործածումը։ Նոյն կարգեր, ի Բալու և այլոց, կան ուրիշ հին հանքեր ալ։ Շապին Գարահիսարի կողմի արծաթի հանքն անգլ. ընկերութիւն մը կը բանեցնէ. ալն։

Քանի որ մեծագոյն պէտքերէն մին փոխադրութեան դիւրութիւնն է, առաջարկուած է դէպ կոչուած լաստանաւերը գործածել, որով կարելի է Եփրատի եզերքը գտնուող Կապան Մատենի արտադրութիւնքը տիկելու վրայ հաստատուած լաստերով փոխադրել մինչև Պիրէճիք, Քէօմիւր Խանի կիրճէն։ Պիրէճիքէ մինչև Իսկէնտերուն դիւրին է փոխադրութիւնը։ Կը յիշուի թէ Սուլթան Մահմուտի օրով Զօրավար Մուլիքէ, որ այն ատեն Օսմ. ծառայութեան մէջ կը գտնուէր, Քէօմիւր Խանի այս կիրճէն անցաւ, Մալթիայի և Իզմիրի մօտ, Քէլէբի վրայ գետեղուած մենաւորմ մը ունենալով իրեն հետ։ Այս փորձ չկրկնուեցաւ այլեւս։ Այն առթիւ իմացուեցաւ թէ գժուար չէ եղեր օգն հանել ժայռի կոր մը որ գետին մէջ կը գտնուի և փանգաւոր կրնայ ըլլալ այն ատեն միայն երբ ջուրերն լիցած են։ Բայց նաեւ կարելի է խուսափիլ այս գժուարութենէ՝ հոն բերը վար առնելով և 200 մէտր անդին նորէն բեռնաւորելով։ Ամեն պարագայի մէջ, ահա կիլիկիոյ մէջէն ճամբայ մը արեւելեան վերնագաւառներու հանքանիւթերն ի Միջերկրական փոխադրելու համար։ Բարեբախտաբար, Փոքր Ասիոյ մէջ երկաթուղիներու շինութիւնն արդարացի յոյսեր կը ներշնչէ թէ երկրագործութեան հետ նաեւ հանքագործութիւնն իւր բերքեր արտադրելու նոր և գիւրագին միջոցներ պիտի ունենայ այսուհետեւ։ Թուրքիա մինչեւ ցարդ երկրագործ երկիր մը կը համարուէր. որովհետեւ հողային և կենդանական բերքէ զատ ուրիշ բան չունէր օտար երկիրներուն ծախելու. և յայսմ՝ իսկ տեղ տեղ կարօտ կը մնար ներածումներու։ Երկաթուղիներու և կառուցիներու շինութեամբ վերոյհիշեալ պայմանաց բարեփոխումն եւ, պատճառ չկայ որ մեր գաւառք նաեւ մետաղային արտադրութեան շնորհիւ ապրուստի նոր միջոց մը չունենան։

Վերադառնալով Պուլկար Տաղի հանքին, որոյ ճարտարագէտը վերջերս Հայ մ'էր, Համբարձում էֆէնտի, յուսալի է որ նոր ոգին որ կը տիրէ հանքայ և անտառայ նորակազմ նախարարութեան մէջ, զգալի ըլլայ նաեւ Փոքր Ասիոյ սրտին վրայ գտնուող այս կարեւոր հանքին մէջ, և ակներեւ պակասութիւնք, ուր որ կան, լրացուելով կամ գարմանալով, բնական հարստութեան այն աղբիւր իրաւունք հարստութեան աղբիւր մ'ըլլայ Տէրութեան համար, փոխանակ ծախքի և մտահոգութեան առարկայ մ'ըլլալու։ Հանքայ շահագործումն այսօր շատ յառաջացած գործ մ'է։ Երկրագործութիւնն, հին մէթոտներու հետեւելով հանդերձ, դեռ շատ տեղեր բաւական հոստութեաբեր կ'ըլլայ։ Հանքագործութիւնն ոնանկ չէ։ Արտադրութեան ծախքը պակասցնել՝ արուեստական կատարելութեամբ, փոխադրութեան ծախքը պակասցնել, հանածոներուն քանակութիւնն աւելցնել ու տեսակն աղնուացնել այսօր երեւելի մեկ ճիւղն են գործունէութեան, յորմէ զուրկ գտնուող գործիչներ ի դուր վատնած կ'ըլլան այն գանձեր զոր երկիրը դարերէ ի վեր իւր ծոցին մէջ պահած պահպանած է, ի վայելս ուշիմ և ճարտարագործ մարդկութեան։

ՀՈՎՍԵՓ ՕՍՄԱՆ

* * *

Վսեմ. Սելիմ Մեկիսաէ էֆ.ի անձնէնութեան ներքեւ նոր նախարարութիւն մը հաստատելով հանքայ, անտառայ և երկրագործութեան համար, Վեհ. Սուլթանն ի մէջ այլոց հանքերու շահագործման նոր կարեւորութիւն մը

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (52)

ԺԻՒԼ ԼԵՌՄԻՆԱ

ԲԱՐԻԶԻ ԳԱՅԼԵՐԸ

ԹԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՄԵՌԵԱԼՆԵՐՈՒՆ ԱԿՈՒՄԲԸ

«Ուրեմն անօգուտ թէ՝ ուրիշներուն և թէ ինձի, ուրիշ ընելիք չունիմ եթէ ոչ անհետ ըլլալ։

«Սա կերպով տուն որոշումս։ Վերջին անգամ մըն ալ հարցափորձեցի ինքզինքս։ հարցումը սա էր։

«—Եթէ Թենիան կանչէ քեզի, պիտի երթա՞ս։

«Տեսէք, արդէն Թենիա կ'ըսէի, այսինքն թէ կ'ընդունիմ հրեշային մականունը զոր տուած էին այդ կնոջ։

«Թենիա՞ն, այսինքն այն աղէտալի պատաղիչ լուծանիթն որ կը փակչտի աղիքներուն, կը կրծէ զանոնք, կը սեղմէ, կ'ոչնչացունէ, որ զօրեղ մարդը կմախք մը կը դարձունէ. որ կը սպառէ ուժը, կը ջնջէ կորովը...

«Թենիա՞ն։ սարսափելի տարօրինակութիւն օրուն առջեւ գիտութիւնը դեռ կը վարանի։

«—Եթէ քեզի կանչէր, պիտի երթայի՞ր։

«Եւ ես կը պատասխանէի։

«—Այո՛։

«Ուրեմն վերջ մը դնելու էր կեանքիս։

«Որոշեցի։

«Ինքզինքս մահուան դատապարտեցի։

«Օ՜հ, սոսկալի օրն որ կանխեց այդ գերագոյն գործն։ Երիտասարդական առուգութեան մէջ դեռ որչափ փորձեցի պաշտպանել ինքզինքս, ո՞րչափ կուզէի յարիկ կանգնիլ։ ի՞նչպէս կը ջատագովէի իմ խնդիրս։ ո՞րչափ ներողամիտ եղայ իմ տգեղ գործերուս համար։ Զատագովութիւնք, գանգատք, տրտունջք, ամենքն ալ բախեցան իմ անձնական խայտառակութեանս։ Եւ մտածեցի որ գործադրելու էի անձիս դէմ արձակած այս վճիռս։

«Սակայն, հիմակ կը յիշեմ, վերջին ժամուն շողշողուն տեսիլք մը անցաւ աչքիս առջեւէն։

«Այո, ա՞յբ կը գտնուէր։ Մանկամարդ աղջիկ մը, մաքո՞ւբ, կո՞յս, պաշտելի՞։ Փայլակի մը պէս անցաւ, և Թուեցաւ ինձ թէ՝ եթէ աւելի կանուխ հանդիպէի անոր, մարդ մը կ'ըլլայի։

«Բէ՛հ։ իմ խելս սիրտս խաբող նոր պատրանք մըն էր այս։

«Մնացեալը գիտէք։

«Եւ հիմակ, պարոններ, դուք որ զիս ազատեցիք, դուք որ իրաւունք ունիք մանրաքննելու հոգիս ամենէն խորին ծալքերը։ ։ ։

«Դատեցէք զիս։ ։ ։

«Մինակ, ազէկ մտիկ ըրէք։ ։ ։ Բաւական անկեղծ եղայ, բանի տեղ չդրի իմ հպարտութիւնս, իմ անձնասիրութիւնս։

«Ես ինքս կրնամ վստահիլ խօսքիս։

«Այն վայրկենէն սկսեալ յարում ուզեցի լթել կեանքը, անանկ փոփոխութիւն մը կատարուեցաւ յիս որ։ ինքզինքս հարցափորձելով, կարծես երկու տարի ետ գացած զգացի։ Ոչ, բոլոր բանձներս ա՛լ գոյութիւն չունին։ Երբեմն Մարսիալը մեռա՞ծ է։։։ և ուրիշ մը արթնցած է, որուն մէջ կը խօսի պատուոյ և ուղղամտութեան բոլոր ձայնները։

«Եթէ ձեր միտքն ազէկ հասկցայ, դուք անձերնիդ նուիրած էք մեծ և վեհանձն գործի մը։ այս եռասէր և ոխերիգ ընկերութեան մէջ՝ իրաւունքի և պատուոյ ասպետներն եղած էք։

«Լաւ ուրեմն։ կը խնդրեմ ձեզմէ։ բացէք ինձ ձեր կարգերը, և իբր հաւատարիմ զինուոր պիտի մարտնչիմ ձեր քովը։

«Բարիքի այս բանակին մէջ, որուն գոյութիւնն յայտնեցիք ինձ, ամենէն տարին և ամենէն վառնգաւոր տեղը պիտի բռնեմ— եթէ կուզէք—։։։ իմ առնական բոլոր կորովներս արթնցած են ի լուր ձեր կոչման։ Զեմ պահանջեր որ այսօր հաւատ ընծայէք ինձ։։։ փորձի ենթարկեցէք զիս։։։ կեանքս ձեզի կը պատկանի։։։ ձեր վճիռին կը սպասեմ։»

Մարսիալ իր աթոռին վրայ ինկաւ, այս խոստովանանքին անձկութիւններէն խոնջ, ուր երեւան եկած էին իր ամենէն դառն յիշատակները։ Քիչ քիչ Մեռեալներու Ակումբին անձերն ալ յուշտակուած էին այս պատմութենէն, ուր մարդկային տկարութիւնն այնքան բարձր կը խօսէր։ Եւ երբ Մարսիալ աւարտեց, բառ մը չեղաւ դուրս այն սեղմուած կուրծքերէն։ Ամենքն ալ կը թաղուէին իրենց խոհանքին մէջ, և թերեւս կը յիշէին թէ իրենք եւս կրած էին տարփանքի աղէտալի լուծը։ Վերջապէս Առման որ Պեռնէյ ոտքի ելաւ։

—Պարոններ, ըսաւ, լսեցիք Մարսիալի պատմութիւնը, լսեցիք նաեւ ձեզի ուղղած իր աղաչանքը։ Գիտէք ինչ կը մնայ մեզ ընել։ Թող ամեն մէկերնիս իջնէ իր խիղճին ամենէն խորը, և հարցունէ ինքնին թէ մեզի կոչում ընող մարդն արժանի՞ է իր անձը նուիրելու այն գործին որուն ձեռնարկած ենք։։։ Ցիչեցէք որ մեր առաջին պարտքն է բացարձակ անկեղծութիւն դէպ ի մեր անձը։ Ուստի, կեղծ հպարտութիւն, իրաւախոհութիւն պէտք չէ։։։ Այո կամ ոչ, Մարսիալ իրաւունք ունի՞ մասնակցելու Մեռեալներու Ակումբին։ Այո կամ ոչ, մենք ալ մեր կարգին իրաւունք ունինք՝ վստահելով իր վրայ՝ իրեն հաղորդելու մեր ընկերակցութեան գաղտնիքները։ Մեր պատասխանը, գիտէք, սապէս պէտք է ըլլայ։ Այո, ոչ, կամ, փոյթ։

Առման Մարսիալին դարձաւ։

—Եթէ կ'որոշենք որ փորձ տեղի ունենայ, կը նշանակէ թէ պէտք ունինք նոր դրաւականներու՝ դեռեւ վերջնապէս մեր մէջ ընդունելէ առաջ։ Այս պարագայն մէջ, չպիտի իմանար մեր անունները և չպիտի տեսնէք մեր դէմքերը։ Պարտք մը կը դընենք ձեր վրայ, և անիկա կատարուելէ ետք միայն մեր ընկերն ու եղբայրը պիտի ըլլաք։

—Ի՞նչ ալ ըլլայ ձեր որոշումը, ըսաւ Մարսիալ, կ'ընդունիմ։ Ես ինքս կը հաստատեմ թէ հոգեկան տկարութիւնը որուն ապացոյցը տուի, կրնայ կասկած ներշնչել ձեզ։ Եւ ոսկոյն եթէ կարենամ ինքզինքս կարդալ խիղճս խորը, պիտի յիշեմ թէ վիշտի և խղճմտանքի բռվէն՝ կամքը դուրս կ'ելլէ աւելի կրգովի և աւելի տոկուն։։։

Առման չարժումով մը ընդմիջեց զայն։

—Լսեցիք ձեզի։ մե՛զ կը մնայ գնեզ դատել։ Դիտցէք նաեւ թէ ամեն որոշում միաձայն հաւանութիւն կը պահանջէ՝ ի մասին ընդունելութեան և մերժման։ Գաղտի փորձին, մէկ ձայն կը բաւէ՝ զայն գործադրելու համար։

Երկայ լռութիւն մը տիրեց։

—Մարսիալ, յարեց Պ. որ Պեռնէյ, մենք իւրաքանչիւրը, քննելէ ետք իր խիղճը, իր որոշումը պիտի յայտնէ ձեր առջեւ։

Մարսէլ գլուխը խոնարհեց։ Անձկութենէ տժգունած էր։

Նախ որը Լիոնել Սթօրիկան ոտքի ելաւ և ըսաւ։

—Այո։

—Այո, ըսին Աշ և Զաֆ եղբայրները։

—Այո, կրկնեց Առման։

Մինակ մարբիզուհին կը մնար։ Երբ զրուելը վեր առաւ, Մարսիալ չկրցաւ զարմացման չարժում մը զսպել։ Սգապատ սրբանը մթնցնող ստուերին մէջ չէր նշմարած թէ իր դատաւորներէն մէկը կին մըն էր։

—Ին

առաւ։ Ասիկա չատ լաւ տնօրէնութիւն մ'է, մանաւանդ որ նոր նախարարը գործին կարեւորութիւնն հասկցած գործնական մարդ մ'է, և իր օրով յուսալի է որ հանքային վարժարան, հանքային պաշտօնէութիւն և շահագործութիւն լոկ անուանական բաներ չըլլան, այլ կայսերական բարձր նպատակին, որպէս նաեւ երկրին տեւական շահերուն օգտակար կերպիւ գործածուին։ Այն ատեն երկիրը պիտի քաղէ իւր հանքերէն այն օգուտը զոր հազար կամ երկու հազար տարի յառաջ կը քաղէ եղեր, և աւելին ալ, քանի որ արդի գիտութիւնն և արուեստն իրաւունք կուտան մեզ աւելի կատարեալ և աւելի նպատակայարմար շահագործութիւն մը ակնկալելու։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռիկայի մօտ, ձկնորսներ գոյ չկ'մը գան, որոյ մէջ թուղթ մը կար այս բառերով։

9.45 երեկոյ. Ռուսալրա խրեցաւ. ամեն ինչ կորած։

Պ. Սիան, երկրորդ տնօրէն փեթերսպուրգի Առեւտրական Դրամատան, ձերբակալուեր է հարցաքննիչ դատաւորին պահանջմամբ։

Անդլ. նաւախումբը տարբոյս վերջանալէն առաջ այցելութիւն մը պիտի ընէ ֆրանսական ջուրերը, ժէրվէ ծովակալի նաւախմբին ի փորձամարթ բրած այցելութեան փոխարէն։ Բայց ասիկա ֆիլոսոֆային լսօսքն է, զոր դեռ վերջնական չի նկատեր թռ։

Թուլոնի քաղաքապետն յայտարարութիւն մը հանելով հրաւիրեց ժողովուրդն որ իւր հանգիստն ազատակներով ցոյց տայ թէ ամեն ազգայ հաւատ խաղաղութեան կը վստահի, և ինքն իսկ հանգարտ մնալով, դրգռիչներէն զգուշանայ։ (Տես բացատրութիւնն այս առաւ Ա. երեսին մէջ։)

Քոպոտրկի հանդուցեալ դպրոցի Քալենպերկի գրկին մէջ գտնուեցաւ 15 հազար անգլ. ոսկւոյ հնչուն գումար մը, զոր հետեւապէս կը ժառանգէ Լոնդոնի գրուքն, որ Քոպուրկի վերհպանն է այսօր, Դուքսվիրէա անուամբ։

Պ. ժորժէֆ Ռենանի Ռէբէ-պլէ Ֆրանէի տնօրէնութենէն հրաժարման վրայ խօսելով, Փարիզեան լրագիրը զայն կը համարին Բանտայի անմեղ զոհերէն մին։ Ինք առանց բարա մը առած ըլլալու, փեսայն էր սակայն հանրածանօթ Ռենանը սիրտնաւորին։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

ՈՍՄԱՆԱԿԱՆ ԹՈՐՀՈՒՐԴ

Ուսումնական Թորհուրդն իւր շաբաթական նիստը կազմեց չորեքշաբթի օր, Զալաթիոյ խորհրդարանին մէջ, ատենապետութեամբ Պէրպէրեան Ռէֆիէսս էֆէնտիի և իմիջի այլոց, հետեւեալները անօրինեց։

1։ Եղջրատի Ուսումնական խորհրդոյ ընտրութիւնը կատարուած և յայտարարուած լինելով, հաստատեց ընտրութիւնն սոյն խորհրդոյ, որոյ անդամը են՝

Նաղարէթ էֆ։ Սահակեան
Մխսոբ » Կէվէհէրեան
Իդնատիոս » Մինասեան
Ալէքսանդր » Արսլանեան

2. Տիկին Մատակեան գրութեամբ մը յայտնելով որ յառաջիկայ կիրակէ օր տեղի պիտի ունենայ իւր Վարժարանի ուսանողուհիոց աւարտական քննութիւններն Բերայի Արհեստանոցին մէջ, կը խնդրէր Թորհուրդէն ներկայ գտնուիլ սոյն հանդէսին։

Թորհուրդը նկատելով որ ինք ցարդ պաշտօնապէս անտեղեակ կը գտնուի սոյն կրթական ձեռնարկութեան մասին, որոշեց այս առթիւ մնաթն տեղեկանալ անոր ուղղութեան և ըստ այնմ դադափար մը կազմել։ Հետեւաբար պաշտօն յանձնեց իւր Ատենապետին՝ Պէրպէրեան էֆէնտիի, և անդամակից Յակոբ Ոսկան էֆէնտիի՝ ըստ այսմ ներկայ գտնուիլ սոյն հանդէսին։

3։ Սեպտեմբեր Ս։ Առաքելոյ տեղւոյն ազգային վարժարանի ուսուցիչ Պ։ Յակոբ Գարակէօզեանի վերադիր յանձնելու համար թէեւ խնդիր ներկայացուցած էր, սակայն Թորհուրդն նկատելով որ այս մասին եկած թղթերը թերի են, որոշեց գրել և յանձնարարել Ն։ Սրբազնութեան որ ըստ տարադրութեան կոչական կանոնադրի հարկ եղած կանոնական գործողութիւններն կատարէ և տեղեկագրէ կեդրոնին ըստ այնմ դաւմանն տնօրինելու համար։

4։ Տպագրապետ Պաղտասարեան էֆէնտի վիճակագրական հրատարակութեան մ'ուսթիւ խնդրած լինելով Թորհուրդէն համարն Թուրքիոյ հայ վարժարանաց վիճակագրին, որոշեց այս մասին գրել Քաղաքական Ժողովոյ և անոր կարծիքն ստանալ։

Թորհրդոյ յաջորդ նիստն տեղի պիտի ունենայ հոկտեմբեր 13 ին։

ԱՐՄԱՇԷՆ ԼՈՒՐԵՐ

Արմաշէն կը գրեն մեզ։

Վարագայ Խաչի տօնը այս անգամ ուրիշ տարիներէ աւելի փայլուն եղաւ յԱրմաշ, երկսեռ ուխտաւորաց խուռն բազմութեամբ, որք Պոլսէն, հեռաւոր տեղերէ, և Առաքազարէն, Պարտիզակէն ու Նիկոմիդիայէն եկած էին, որոց մէջ կը գտնուէին նաև Սեւ Ծովու եզերքը գըտնուող Շիրէ գաւառակի բնակիչներէն 50 յոյն ընտանիք։

Անցեալ չաթթ առաւօտ՝ նախկին հանգուցեալ վանահայր Գէորգ սրբազան Ալիքսանեանի անուան տօնագարձն ըլլալով, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ գերեզմանին վրայ, որ կը գտնուի առ ընթեր մեծ դրան Ս։ Տաճարին Զարմանի Ս։ Աստուածածնի վանուց։

Վարագայ տօնի առաւօտուն՝ Գեր։ Օրմանեան Սրբազան հանդիսաւոր Պատարագ մատոյց, և պարագային յարմար քարոզ խօսելով՝ բացատրեց թէ՝ ի՞նչու համար Արմաշու տօնը՝ յատկապէս մեծ և Վարագայ Խաչերու տօներուն կը կատարուի։ Այս առթիւ յայտնեց թէ՝ Արմաշու հիմնադիր Եպիսկոպոսները՝ Վարագայ Խաչի տօնին կատարած են հիմնարկութեան հանդէսն ու օծումը։ Նոյնպէս, ինքն ալ Դպրեվանուց հիմնադրութիւնը Խաչի տօնին բրած և վարժարանի սանուց ձեռնադրութիւններն ալ նոյն օրը կատարուած ըլլալուն, վանքին համար՝ տօնադարձ նշանակուած է այդ օր։ Օրմանեան Սրբազան իր քարոզն աւարտեց բարեմաղթութիւններ ընելով վանն կենաց և բարօրութեան Վեհ։ Սուլթանին։

Վարագայ Խաչի առաւօտուն, յետ Ս։ Պատարագի, յատուկ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ գործարանապետ Գաֆաֆեան Յովսէփ էֆէնտիի հանգուցեալ որդւոյն՝ Գաֆաֆեան Արամ էֆէնտիի հոգւոյն համար, որուն հայրը, ինչպէս յայտնի է, 1000 լիրայէն աւելի ծախսելով՝ աղօրիք մը շինել տուած է վանքին համար, կատարկագործեալ մեքենայական զրութեամբ, որուն բացման հանդէսն ըստ խնդրանաց Գաֆաֆեան էֆէնտիի, պիտի կատարուի երկու շաբաթէն։

Յակոբիկ Ա։ Այվազեանի անձնական գոյքերն և հագուստներն, իր ծնողաց կողմէ նուիրած լինելով Արմաշու վանքին, Վարագայ Խաչի երկրորդ առաւօտուն Արմաշու Նախկին միաբան Արժ։ Յակոբ վարդապետ Ս։ Պատարագ մատուցանէլէ վերջ, Գեր։ Վանահօր Օրմանեան Սրբազանի հանդիսաւորութեամբ համայն Միաբանութիւնն և Դպրեվանուց սարկաւագներն և գպիրները և ուխտաւորք թափորով գացին օրհնել վաղամեռ երիտասարդին գերեզմանն, որոյ մօտ կանգնած էր գլխակալ և արտասուաթոր արգկերոյս հայրը, որ կը նորոգէր տխուր հանդէսի մը յիշատակութիւնը։

Վերոյիշեալ գոյքերը պարունակող գեղակերտ անուկը՝ յատուկ յիշատակարանով յանձնուեցաւ Գեր։ Մաղաքիա Սրբազանին, որպէս զի Արմաշու բոլոր խաչերն և Ս։ Մասունքներն անդ պահպանուին յետ այսորիկ։

Գեր։ Մաղաքիա Սրբազան՝ ուրբաթ երեկոյեն Դպրութեան աստիճան տուաւ հետեւեալ տասը տիրացուներուն։

Գառնիկ Տէրտէրեան, Եզոդիացի։
Յակոբ Արմուտլեան, Մէնէմէնցի։
Միսաք Սուրեան, Արաբկիրցի։
Արշակ Նժդեհեան, Խաչէրցի։
Գրիգոր Շահինեան, Մանիսացի։
Յովհաննէս Նազարեան, Սեբաստացի։
Արամ Մինէլեան, Նիկոմիդացի։
Մինրան Թապաքեան, Առաքազարցի։
Միքայէլ Ադրեան, Թուրեցի։
Կարապետ Մատթէոսեան, Նիկոմիդացի։

Իսկ շաբաթ երեկոյին կիսասարգաւագութիւն և Վարագայ Խաչի առաւօտուն աւագ սարկաւագութեան աստիճան տուաւ հետեւեալ հինգ գպիրներուն։

Ներսէս սրկ. Դալէմքէրեան, Կ. Պոլսեցի։
Սարգիս սրկ. Դուրեան, Կ. Պոլսեցի։
Շնորհալի սրկ. Միրզոյեան, Կայսերցի։
Դաւիթ սրկ. Շահրամեան, Կիւմիւշխանէցի։
Մկրտիչ սրկ. Պիլէճեան, Պարտիզակցի։

Երկուշաբթի գիշեր ժամ 2ին, Արմաշու Ս։ Տաճարին մէջ կատարուեցաւ վանքին գործակատար և Գէորգեան Ճեմարանի աշակերտ Օթանասեան Մինրան էֆէնտիի ամուսնութեան հանդէսն, Պոլսեցի ժամագործ Ռուբէն աղա Գասպարեանի աղջկան՝ Օրիորդ Զարուհիի հետ, կնքահայրութեամբ փաստաբան Նազարէթեան Մինրան էֆէնտիի։

Գեր։ Օրմանեան Սրբազան այս առթիւ գեղեցիկ խրատական մը խօսեցաւ, և ընդհանուրց նորապսակ ամուսնոյ։

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան պարահանդէսն, որ տեղի պիտի ունենայ վաղը (շաբաթ) գիշեր, փայլուն ու յաջող ընծայելու համար ամեն աշխատութիւններուն է Կարգադիր Մանախումբին կողմէ։ Պարերը պիտի կատարուին Թէվֆիք Պաշի թատրոնի սրահին մէջ, որ չբեղապես կը զարդարուի, և պարտէզն ալ հանդիսական տրամադրութեան ներքև պիտի դրուի։ Աւելորդ է յիշեցնել թէ պարահանդէսն անդիմակ է։ Պիտի նուագէ Պ։ Բոլանկէինուագախումբը։

Կարգադիր Մանախումբը կը հաղորդէ մեզ թէ ուտելիք և ըմպելիք պարտէզին սովորական գնովը պիտի տրուին։ Թօմպօլա կամ վիճակահանութիւն չպիտի ըլլայ, ինչպէս կը կատարուի սովորաբար ձեռնայինն պարահանդէսներուն մէջ։ Տոմակներու գինն է մէկ օսմ. ոսկի, որ իրաւունք կուտայ պարտէզն ու թատրոնը միանգամայն մտնելու։

Ազգանուէր Հայուհեաց և Կարգադիր Մանախումբին հրաւէրն ամենուրեք հանդիպելը ընդունելութիւն մը գտած ըլլալով, տարակոյս չի մնար որ վաղը գիշերուան պարահանդէսը փայլուն յաջողութեամբ պսակուի։

Տիկին Մելիքեան, Յակոբ և Տիրան Մելիքեան և Ն։ Եղամճեան, Ս։ Եսրբճեան, Պ. Քէրէստէճեան և Կ։ Զիլճեան ընտանիքները ցաւօք սրտի կը ծանուցանեն զգառնադէտ կորուստ իրենց Ամուսնոյն, Եղբօր, Քեռ, Քեռորդւոյն և Փեսային,

ՄԱՐԳԱՐ ԷՖԷՆԴԻ ՄԵԼԻՔԵԱՆԻ

(ՔԱՂԱՔՈՒՆԱՐ ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊՈՐՍԱՅԻ

որ յետ երկարատեւ հիւանդութեան կնքեց իւր մահկանացուն չորեքշաբթի երեկոյ ժամ 11ին, ի խոր սուգ համակելով իւր եղբայրները, քոյրերը, ամուսինը, զաւակները և համայն ազգականներն ու բարեկամները։

Յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ այս օր ուրբաթ, Հոկտ։ 1, ժամը 5 ին, ի Ս։ Յովհաննէս Եկեղեցւոյ կէսիկ փաշայի, ուսկից հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պալըգլը գերեզմանատունը։

Ազգականք և բարեկամք կը հրաւիրուին ներկայ գտնուիլ։

1 Հոկտ։ 1893
Կէսիկ-Փաշա

Ընտրեալ Լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՆԵՐ։ — Իւրաքանչիւր առաջին աստիճան տրուեցաւ պատուաւորանեներու գլուխին դեր-անօրէն Սամի էֆէնտիի։

Իւրաքանչիւր երկրորդ աստիճան՝ արարողութեան պաշտօնեաներէն Պէհճեդ պէյի։

Սանիյէի երկրորդ աստիճան՝ Միխալքճիքի գայմագամ Լամի պէյի։

Երուսաղեմայ Նախ. անուանեցաւ Ահմէտ Միւսլիմ էֆէնտի, Նախորդ Նախ. Եանեան։

Այնթապի Գուշատա գաւառակին Նախ. անուանեցաւ Իսմայիլ էֆէնտի, նախորդ Նախ. Մէնլիքի։

Պրուսայի Եէնիշէհիր գաւառակին Նախ. անուանեցաւ Իսմայիլ Աչիք էֆէնտի, նախկին Նախ. Իշխէկէօղլի։

Քարբերդի Դըզըլ-Քիլիսէ գաւառակին Նախ. անուանեցաւ Ալի էֆէնտի, նախորդ Նախ. Միտհաթի։

Տիարպէքիրի Զէրիկ գաւառակին Նախ. անուանեցաւ Սէյիտ-ալլահ Ֆեվզի էֆէնտի։

Գոսօվայի զօրաբաժնին հրամանատար անուանեցաւ Գ։ զօրաբանակի Ֆէրիկներն Թէվֆիգ փաշա։ Գոսօվայի կուսակալութիւնն ըստ առաջնոյն պիտի վարէ Ֆէրիկ Լտհէմ փաշա։

Բ։ զօրաբանակին հեծելազօրայ զօրաբաժնին հրամանատար անուանեցաւ Ճիրը Մուսթաֆա փաշայի հեծելազօրաց հրամանատար Միրլիվա Ագիլ փաշա, որուն Ֆէրիզուլեան աստիճան տրուեցաւ։

Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Գոսօվայի հրամանատար Ֆէրիզ Թէվֆիգ փաշայի։

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Իզմիրի նախնական դատարանի Հուգուգի ճիւղին Նախագահ Մահմուտ Լատա էֆէնտիի։

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ։ — (Պաշտօնական Զեկոյցում)։ Մինչեւ երեկուան ժամ 7, հիւանդանոցին մէջ բնաւ դէպք չէ պատահած։ Սկիւտարի մէջ երկու մարդեր վարակուած են, Պէյօղլի մէջ մէկ և Սելիմիյէ զօրանոցին մէջ մէկ։ Սելիմիյէ զօրանոցին մէջ հիւանդացողներէն չորսն առողջացած են ինչպէս նաեւ մին այն անձերէն, որք քոլերինի նշաններով հիւանդացած ըլլալով նաւային կեդրոնական հիւանդանոցը փոխադրուած էին։ Հայտար Փաշայի հիւանդանոցին մէջ գտնուող հին հիւանդներէն երկուքը մեռած են։ Սկիւտարի Ցաղ Համամը թաղին մէջ ալ մարդ մը հիւանդանալով մեռած է։ Միւս հիւանդներուն առողջական վիճակը գոհացուցիչ է։

* * *

Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակուած է հետեւեալ պաշտօնական Յայտարարութիւնը։

Տեղեկութիւն առնուած է թէ այլ եւ այլ տեղերու մէջ պատահած հիւանդները դարմանող բժիշկներն երբ քոլերայի նման նշաններ տեսնեն, հիւանդը դարմանելէ կդգուշանան և թաղապետական ոստիկանին իմաց տալով կը բաւականանան։ Անկից ալ մինչև որ բժիշկ և կամ հիւանդը հիւանդանոց փոխադրելու համար կառք զրկուի, հիւանդը ժամերով առանց դարմանի կը մնայ։ Այդ, նկատելով որ այդ պարագան, որ պատճառ կըլլայ հիւանդին վիճակը ծանրացնելուն, բնաւ ներելի չէ, որոշմամբ առողջապահական յանձնաժողովոյ կը ծանուցուի բոլոր բժշկաց թէ յետ այսորիկ եթէ տեղ մը հիւանդութիւն երեւան ելնէ՝ ո՛ր բժիշկին որ զինուի այդ բժիշկը պէտք է վուժայ հիւանդը դարմանելու և միւս կողմէն տեղեկութիւն հաղորդէ թաղապետութեան։ Նոյնպէս կը ծանուցուի թէ հակառակ պարագային մէջ բժիշկները պատասխանատուութեան պիտի ենթարկին։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ։ — Սեպտեմբեր 29ին Իզմիրի ու Տէնիզլիի մէջ նոր դէպք չէ պատահած։ Իզմիրի մէջ հին հիւանդներէն երեքը մեռեր են։ Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը նոր գոհացուցիչ է։

—Սեպտ։ 28 էն 29, Պաղտատի մէջ քոլերայէ երկու մահեր պատահած են։ Սեպտ։ 27 ին ու 28 ին Հըլէի մէջ ութ մարդեր մեռած են և Խանգիրի ու Շըրջկայ Գըզըլպաթ անուն տեղը չորս։ Սեպտ։ 27 ին՝ Եագուպի մէջ մէկ։ Սեպտ։ 23 էն 26, Մէնտրիի մէջ երեսուն։

Ի ԿԱՅՍ։ ՊԱԼԱՏ։—Ներքին գործոց Նախարար Վեհ։ Խալիլ Ռիֆաթ փաշա երէկ կայս։ պալատ երթալով ստացաւ Վեհ։ Սուլթանի հրամանները։

Ի Բ։ ԴՈՒՌՆ։—Աւստրիական դեսպան Պարոն ֆոն Քալիչէ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր։ Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վեսիր։ Նախարարին և Վեսիր։ խորհրդականին հետ։

ՄԱԼԻԹԷԻ մէջ երէկ յանձնաժողով մը ի նիստ գումարուեցաւ ընդ Նախագահութեամբ Նախարար Վեսիր։ Նաղիֆ փաշայի և ելմտական խնդրոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

ՀԻՏՏԷ ԵՒ ՄԷՔԻԷ։ — Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակեալ Պաշտօնական Յայտարարութիւն մը կը յիշեցնէ՝ մայրաքաղաքիս կալուածատրոց դանձման համար հրատարակեալ կանոնագրին, որուն Հրդ յօդուածին տրամադրութեանց համաձայն երբ կալուածատէր մը իւր տուրքը չվճարէ, իւր շարժուն սեպհականութիւնն պարտքին բաւականացող քանակութիւն մը առնուելով աճուրդի յատուկ տեղերու մէջ պիտի ծախուի և դոյացեալ դրամէն տուրքը պիտի գանձուի ծախքովն հանդերձ։ Նոյնպէս 5րդ յօդուածն որ կը տրամադրէ թէ վարձու տրուած կալուածի մը տուրքն երբ չվճարուի, վարձակալք պարտաւոր պիտի ըլլան տուրքը հատուցանել ի հաշիւ վարձքին։ Արդ, այդ կանոնադրով սահմանեալ պայմանամամբ մոտեցած ըլլալով՝ կալուածատէրք կը հրաւիրուին վճարել իրենց տուրքերն, որպէս զի օրինաց տրամադրութիւնն ի գործ գնելու տեղի չմնայ։

ՍԴԱՄՊՈՒԼ լրագիրն որ անպայման կերպով դադարման դատապարտուած էր, երէկուընէ վերսկսաւ հրատարակուիլ։

ՕՏԱՐ ՆԱԻԵՐ։— Մասնաւոր օրէնքի մը համաձայն՝ օտար երկիրներէ Թուրքիա եկող օտար նաւերը պարտին իրենց առողջապահական վկայագիրը վաւերացնել տալ իրենց ճամբայ ելած տեղերու օսմանեան հիւպատոսաց։ Արդ, կայս։ կառավարութիւնը նկատելով որ նաւապետք ունենք չեն յարգեր օրինաց այս տրամադրութիւնն, որոշած է որ օտար երկիրներէ եկող նաւերու առողջապահական վկայագիրին անպատճառ վաւերացած ըլլան օսմանեան հիւպատոսաց կողմէ և հակառակ պարագային մէջ, եթէ վարակեալ չ'ըլլան, մերժուին և կամ իրենց հասած նաւահանգիստներուն մէջ չդիպչի ներքև առնուելու պայմանաւ՝ հինգ օրուան քարանթինի ենթարկուին։

ՏՈՒԲԹ։ ՇԱՆԹՄԷՍ երէկ Բ։ Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր։ Մեծ-Եպարքոսին հետ։

ԲԱՐԱՆԹԻՆԱ։ —Պարայէն, Մուհամմարէն և Ֆաօէն եկող նաւերուն համար ապրիլ 19 էն ի վեր հաստատուած տասնօրեայ քարանթինն սեպտեմբեր 28 էն իվուցուած է հինգ օրուան, և պիտի մաքրուի Ֆամարանի ու Ապու-Սաատի (Ճիտտէի մօտ) մաքրանոցին մէջ։

ԱՇԻՐԷԹՆԵՐՈՒՆ վարժարանը, որ ցարդ կը գտնուէր ի Պէյքթաշ արքունի կարուածոց մէջ, կայս։ Իրատէի մը համաձայն, փոխադրուած է ի Թապաթաշ նոր շէնքի մը մէջ, որ Վեհ։ Սուլթանին կողմէ շնորհուած է։ Այդ փոխադրութիւն կատարուած է, որովհետեւ առաջուան շէնքն անբաւական էր աշակերտներու պարունակելու։ Այդ առթիւ վարժարանին պաշտօնէից, ուսուցիչներու և աշակերտաց կողմէ բարեմաղթութիւններ եղած են վասն կենաց Վեհ։ Սուլթանին։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹ։— Պոլսոյ Աքսերայի Գըզել Մինարէ թաղին չրջակայքը գտնուած պարտէզ մը անցեալները շղթայի ներքև առնուած էր հիւանդութեան դէպք մը պատահած ըլլալուն համար։ Այդ պարտէզին մէջ գտնուողները գիր մը մատուցանելով Քաղաքապետութեան շնորհակալութիւն յայտնած են այն դիւրութեանց համար, որք շղթայի ներքև գտնուած առեւնին ընծայուած են՝ իրենց անհրաժեշտ պիտոյից հայթայթման և տրուելուն առթիւ։ Միանգամայն բարեմաղթութիւններ եղած են վասն կենաց Վեհ։ Սուլթանին։

ՇԻՏՏԷ ԵՒ ՄԷՔԻԷ։ — Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակեալ Պաշտօնական Յայտարարութիւն մը համաձայն, Վեհ։ Սուլթանն հրամայած է նոր մաքրանոց մը հաստատել Ճիտտէի շրջակայքն, որովհետեւ իւրամ ուխտաւորաց մէկ մասը թէեւ Գուրամանի մէջ քարանթինա կսպասէ, սակայն իսլամական ուրիշ քաղաքներէ գացող ուխտաւորք ուղղակի Ճիտտէ կերթան և այսպէս այդ քաղաքին մէջ համախառնում մը տեղի կ'ունենայ։ Առանց եկած քաղաքներուն մէջ եթէ քոլերա ալ չըլլայ, միշտ հաւանականութիւն մը կայ որ այդ համախառնումէն հիւանդութիւն մը երեւան ելնէ։ Նոր մաքրանոցը պիտի հաստատուի այնպիսի տեղ մը որուն օդն ու ջուրը բնակութեան յարմարին և նաւերն ալ դիւրութեամբ կարենան մօտենալ։ Այդ մաքրանոցին վայրն որոշելու համար բժշկական յատուկ յանձնախումբ մը պիտի ղրկուի։

Ն։ Կ։ Վեհափառութիւն հրամայած է միանգամայն որ Մէքքէի շրջակայքն այնպիսի տեղ մը, ուր օդը մաքուր ըլլայ, հիւրանոց մը կառուցուի վեց հազար հոգի պարունակելու բաւական և այդ շէնք ամեն պէտքերով յատկացուի այն ազգատ ուխտաւորաց, որք Մէքքէի մէջ չեն կրնար տեղ մը գտնել։ Հիւրանոցին կից պիտի կառուցուին դեղարան մը և հիւանդանոց մը և հարկ եղած առողջապահական ամեն միջոցներ ձեռք պիտի առնուին։ Վեհ։ Սուլթանն հրամայած է միանգամայն իւր մասնաւոր արկղէն վճարել այդ շէնքերու կառուցման յատուկ ծախքն որ երեսուն հազար ոսկւոյ չափ կը հաշուի։ Միանգամայն Բարձր։ Մեծ-Եպարքոսին վերին հսկողութեան ներքեւ փութով յանձնախումբ մը կազմելով ղրկել, որպէս զի անմիջապէս շինութիւնը սկսին և մինչեւ ուխտագնացութեան ժամանակն աւարտին։

ԿԱԼՈՒԱԾԱՏՈՒՐԲ։— Այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակեալ Պաշտօնական երկրորդ Յայտարարութիւն մը կը յիշեցնէ՝ մայրաքաղաքիս կալուածատրոց դանձման համար հրատարակեալ կանոնագրին, որուն 4րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն երբ կալուածատէր մը իւր տուրքը չվճարէ, իւր շարժուն սեպհականութիւնն պարտքին բաւականացող քանակութիւն մը առնուելով աճուրդի յատուկ տեղերու մէջ պիտի ծախուի և դոյացեալ դրամէն տուրքը պիտի գանձուի ծախքովն հանդերձ։ Նոյնպէս 5րդ յօդուածն որ կը տրամադրէ թէ վարձու տրուած կալուածի մը տուրքն երբ չվճարուի, վարձակալք պարտաւոր պիտի ըլլան տուրքը հատուցանել ի հաշիւ վարձքին։ Արդ, այդ կանոնադրով սահմանեալ պայմանամամբ մոտեցած ըլլալով՝ կալուածատէրք կը հրաւիրուին վճարել իրենց տուրքերն, որպէս զի օրինաց տրամադրութիւնն ի գործ գնելու տեղի չմնայ։

ՕՍՄԱՆԵԱՆ ԴՈՐԾԱՐԱՆ։— Օսմանեան մարտանաւերու եւ իսարէի Մախսուսէի շոգենաւերու համար կաթսայներու շինութեան ու նորոգութեան յատուկ կայս։ գործարանը տասը տարի պայմանաժամով բանեցնել յանձն առած է Քիօնիպէրէրը Մաքինէն Ֆոսրիի անուն գերմանական շինութեանց ընկերութեան տնօրէն ու առաջին երկրաչափ Պ։ Մաքինօս։ Նովային նախարարութեան և այդ անձին միջև պայմանագրութիւն մը կնքուած է։ Այդ ընկերութիւնը, որուն գրամագլուխն երիվիսն մարքէ կը բաղկանայ, յանձն առած է նաև աւազաններու մէջ մանկիլք նաւերը մաքրելու ու ներկելու գործը ընկերութիւնը գործի պիտի սկսի նոյեմբեր ամսոյ մէջ։

ՈՃԻՐ։—Առջի գիշեր, ի Զալաթիա, բիլալէը եանքօ, Սուլթանա անուն կնոջ մը վառահամաւ տան մէջ դաշնով ձախ կողէն վիրաւորեց Մառի անուն աղջիկ մը, եանքօ թէեւ փախաւ, սակայն քիչ յետոյ ձերբակալուեցաւ։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Ս։ Խաչ վարժարանաց աղքատ ուսանողաց Խնամակալութիւնը թատերական ներկայացում մը կազմակերպած է յառաջիկայ կիրակի գիշերուան համար, ի նպաստ իւր պաշտպանելոց, և լսայաց է որ Սիկուարի ազգայինք այս առթիւ ալ պիտի չի զլանան իրենց աջակցութիւնն, որուն այնքան կը կարօտի յիշեալ Խնամակալութիւնն առաջ տանելու համար իւր մարդասիրական գործը։

Սոյն ներկայացման համար, որ պիտի տրուի Պէյլէր Օղլուի պարտէզի թատրոնին մէջ, որոշուած խաղն է ՄԱՅՐՈՒ, և զանազան մը, Բարթիէլեմոնի ոնէյ-պլինը, երկուքն ալ Թուրքերէն լեզուաւ։

* * *

Պ։ Լապրունայի իտալական օպերէթի խումբը վաղը գիշեր նոյն թատրոնին մէջ պիտի ներկայացուցէ ՔԱՌՄԷՆ, մասնաւորապէս Սինանեան նուագախումբին։ Բուն պիտի առաջնորդէ Պ։ Լապրունա։

Մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք մեր այսօրուան չորրորդ երեսին մէջ հրատարակուած ծանուցումի մը վրայ, Քոնեաք Քոթոնի։ Այս ընտիր քոնեաք, որուն ազնուութիւնն ու օգտակարութիւնը հռչակած են ժիծանեմ բուժիչներ, կարեւոր ծառայութիւն մը կուգայ մատուցանել հասարակութեան, տարափոխիկ հիւանդութիւններու այս եղանակիս մէջ։ Անոր գործածութիւնը կըրնայ նպաստել ուեէ կասկածելի հիւանդութենէ զերծ մնալու։

Մեր այսօրուան չորրորդ երեսին ծանուցումներուն մէջ կը հրատարակուի Համպուրգի Մ։ Մ։ Վայնթէն և Ընկ. հանրածանօթ դրամատան ազգն։ Մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք այս ծանուցումին վրայ։ Խնդիրը մասնաւոր ձեռնարկի մը վրայ չէ, այլ պետական վիճակահանութեան մը, զոր արտօնած և երաշխաւորած է կառավարութիւնն։

Վանակրան

ՂՈՒԱԹԻԱ, 1 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

3 տարիս Լոնտրայի վրայ	109 ½
3 » Փարիզի »	23 05

ՕՍՄԱՆԵԱՆ ՓՈՆՈՍԻՆ

